# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

## ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱՈՐԱԿԻԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

**«01» «04» 2024թ.**

**Ք.ԵՐԵՎԱՆ** **ժամը 11:00**

**ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝**

ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետ Ա. Ափյան (հանձնաժողովի նախագահ),
բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետի տեղակալ Ա. Թամազյան,
գ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Ավետիսյան,
դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության օպերատիվ կառավարման կենտրոնի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Կ. Գյուլումյան,
ե. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության տեխնիկական աջակցման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Է. Անդրիասյան,
զ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Աբասյանին (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

Նիստին ներկա չի գտնվել հանձնաժողովի անդամներից՝

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության կազմակերպման վարչության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Ն. Հակոբյան: ՀՀ կառավարության 526–Ն որոշման կարգի 26–րդ կետի 2–րդ ենթակետի համաձայն նիստը համարվում է իրավազոր:

1. ՕՐԱԿԱՐԳ.

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **հանցագործությունների կանխարգելման և բացահայտման, ինչպես նաև ճանապարհային երթևեկության անվտանգության և իրավախախտումների արձանագրման համակարգի** ձեռքբերման նպատակով երկփուլ մրցույթի միջոցով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ** ծածկագրով նախաորկավորման ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

19.03.2024 թվականին հանձնաժողովի նիստը կասեցվել էր **ՀՀ կառավարության N 526-Ն որոշման կարգի 67-րդ կետի համաձայն** հարցում և gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված փաստաթղթերով ուսումնասիրություններ կատարելու համար: **Հանձնաժողովը վերջացրեց գնահատումը և արձանագրեց՝**

2. **Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.**

**Մանակցության հայտ ներկայացրած՝**

**«Supcon Technology Co.» LTD-ի, «ԴիՋիԲեյս» ՍՊԸ-ի և «Урбантех-М» ООО -ի կողմից ներկայացված հայտը/փաստաթղթերը/ համապատասխանում են ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ծածկագրով նախաորկավորման ընթացակարգի հայտարարության պահանջներին և հանձնաժողովի կողմից գնահատվեցին բավարար, իսկ «Փրեթի Ուեյ» ՍՊԸ-ի, «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ի, «ՋիԷՆՍի-Ալֆա» ՓԲԸ-ի, «Ջի-Էս-Սի» ՍՊԸ-ի, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի և «Սոֆթնետսրս ՍՊԸ, Ջերո-Լան ՍՊԸ, «Վիժնլաբս ՍՊԸ» կոսորցիումի կողմից ներկայացված հայտերում /փաստաթղթերում/ առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝**

| Կազմակերպության անվանում | Արտադրողի ապրանքանիշով հանդես գալու լիազորություն | Սույն տարվա և դրան նախորդող 5 տարիների ընթացքում իրականացված առնվազն 2 նմանատիպ պայմանագիր | Մասնագետների որակավորման վերաբերյալ փաստաթղթեր | Մասնակցի կողմից նմանատիպ պայմանագրորով առնվազն մեկ միլիոն բնակչություն ունեցող բնակավայրում ներդրված ենթակառուցվածքին ներկայացվող պահանջներ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Իրականացվել է հանցագործությունների կանխարգելման և բացահայտման, ինչպես նաև ճանապարհային երթևեկության անվտանգության և իրավախախտումների արձանագրման համակարգ (այսուհետ ենթակառուցվածք) ստեղծման համար անհրաժեշտ ապրանքների և նյութերի մատակարարում և տեղադրում. | Ենթակառուցվածքի տեխնիկական սպասարկում | Ենթակառուցվածքի ծրագրային ապահովում |
| Դիջիբեյս ՍՊԸ | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է |
| Հարմոնիա տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ | Առկա է | Առկա է | **Առկա չէ** | Առկա է | Առկա է | Առկա է |
| Օազիս կոմպյուտեր ՍՊԸ | Առկա է | **Առկա չէ** | **Առկա չէ** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** |
| ՍոֆտՆետՍորս, Ջերո-լան, Վիժն Լաբս կոնսորցիում | **Առկա չէ** | **Առկա չէ** | **Առկա չէ** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | հավաստող փաստաթղթեր | հավաստող փաստաթղթեր | հավաստող փաստաթղթեր |
| Ջի-Էս-Սի ՍՊԸ | Առկա է | **Առկա չէ** | Առկա է | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** |
| Ջի-Էն-Սի Ալֆա | Առկա է | **Առկա չէ** | **Առկա չէ** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** |
| Էյչ Գրուպ ՍՊԸ | **Առկա չէ** | **Առկա չէ** | **Առկա չէ** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** |
| Урбантех-М ООО | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է |
| Փրիթի ուեյ ՍՊԸ | Առկա է | **Առկա չէ** | **Առկա չէ** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** | **առկա չեն հայտարարության պահանջներին համապատասխանող պայմանագրեր կամ դրանց կատարումը հավաստող փաստաթղթեր** |
| «Supcon Technology Co.» LTD | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է |

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ծածկագրով երկփուլ մրցույթի միջոցով գնում կատարելու նախաորակավորման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մեկ /1/ աշխատանքային օրով և «Փրեթի Ռիեյ» ՍՊԸ-ին, «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ին, «ՋիէնՍի-Ալֆա» ՓԲԸ-ին, «Ջի-Էս-Սի» ՍՊԸ-ին, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին, «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին և «Սոֆթնետսրս ՍՊԸ, Ջերո-Լան ՍՊԸ, «Վիժնլաբս ՍՊԸ» կոսորցիումին առաջարկել կատարել վերը նշված անհամապատասխանությունների շտկումները՝ **ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ծածկագրով նախաորակավորման հայտարարության պահանջներին համապատասխան, այն է՝**

---

*1. Մասնակից ընկերությունը պետք է արտադրող ընկերության կողմից ներկայացնի հավաստող փաստաթուղթ առ այն, որ մասնակից ընկերությունը լիազորված է տվյալ գնման ընթացակարգին մասնակցելու՝ արտադրող ընկերության ապրանքանիշով:*

*2. Մասնակից ընկերությունը կամ նրա կողմից ներկայացվող արտադրող ընկերությունը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 5 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն 2 պայմանագիր:*

*3. Մասնակից ընկերությունը կամ նրա կողմից ներկայացվող արտադրող ընկերությունը պետք է ունենա ապրանքների և ծրագրային ապահովման շահագործման համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ՝ ներկայացնելով մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղեր:*

*Համանման /նմանատիպ/ են համարվում Մասնակցի կողմից նմանատիպ պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան գնման առարկայի առնվազն մեկ միլիոն բնակչություն ունեցող բնակավայրում պատշաճ ներդրված լինելը.*

*Ընդ որում՝*

*1.*

*ա) իրականացվել է հանցագործությունների կանխարգելման և բացահայտման, ինչպես նաև ճանապարհային երթևեկության անվտանգության և իրավախախտումների արձանագրման համակարգ (այսուհետ Ենթակառուցվածք) ստեղծման համար անհրաժեշտ ապրանքների և նյութերի մատակարարում և տեղադրում.*

*բ) Ենթակառուցվածքի տեխնիկական սպասարկում*

*գ) Ենթակառուցվածքի ծրագրային ապահովում*

*2. Ենթակառուցվածքի ստեղծումը կարող է իրականացված լինել նաև նույն նախագծի շրջանակներում՝ առանձին պայմանագրերի միջոցով, որոնք ներառում են.*

*ա) ապրանքների և նյութերի մատակարարում և տեղադրում*

*բ) ծրագրային ապահովում/ումների մշակում և ներդրում*

*գ) ենթակառուցվածքի սպասարկում*

*Սույն ենթակետի 1-ին և/կամ 2-րդ կետով նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի, հավաստագրերի և այլ փաստաթղթերի) կամ պատվիրատուի կողմից հավաստող գրության և/կամ հաշվարկային փաստաթղթերի, հանձնման ընդունման ակտերի կամ գործարքը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները: Ընդ որում՝ ապրանքների և նյութերի մատակարարումը, տեղադրումը, ծրագրային ապահովման/ումների մշակումը և ներդրումը, ինչպես նաև Ենթակառուցվածքի սպասարկումը առանձին պայմանագրերով իրականացված լինելու դեպքում, մասնակցի կողմից սույն ենթակետով պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են յուրաքանչյուր առանձին պայմանագրի համար:*

4. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԱՅՐԸ, ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ.**

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա կասեցված 1 աշխատանքային օրը ավարտվելուն հաջորդող աշխատանքային օրը,այն է 03.04.2024 թվականին, ժամը 11:00-ին՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեում, ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժնում:

5. Ընդունվեց որոշում՝ կողմ 5, դեմ 0 :

6.

**Հանձնաժողովի նախագահ՝** **Ա. Ափյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** **Ա. Թամազյան**

**Ա. Ավետիսյան**

**Կ. Գյուլումյան**

**Է. Անդրիասյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** **Ա. Աբասյան**